«ՔՐԻՍՏՈՍ ՑԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ»

Ո՛, որ ի սուգ անմիսիթար հեծէք և լայք զօրն աղջոյն
Զսիրելւոյն մահ յիշելով և զնորա բան օրհասին,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, առհաւատչեայ յոյս յարութեան.
Ուրախ լերուք, զի՝նգ սիրելւոյն յառնել ունիք ի կեանս անմահ։

—

Ո՛, որ ի բանտ աղջամղջին, անլոյս, անյոյս կայք և հեծէք
Ի սիրելեացն անձուկ տապեալ աչօք առ դուրս վայրահակ,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, յոյս, լոյս և կեանք և փրկութիւն.
Հաւատացէք ի Նա յուսով, հոգւով լիջիք նմա կցորդ։

—

Ո՛, որ ի հոգ և ի տոռունս աղքատութեան էք տուայտեալ,
Զամենոյն կեանս հոգոյ ելէք հոգալ զանձանց ձեր զկարիս,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, վաստակելոյ հանգուցիչ Հայր.
Արկէք ի Նա զհոգս ձեր, լերուք գորձօն և անվրհատ։

—

Ո՛, որ ի մեղս էք զգայռեալ անապաշաւ ամենևին,
Դարձի յուսոյ չտայք նշոյլ, վիրօք մեղայ հոգեվարեալք,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, բժիշկ ըստ ձեզ ախտացելոց,
Դարձէք առ Նա, դարձցի առ ձեզ բառնալ զձեզ ի յանկմանէդ։

—

Ո՛, որ ի կեանս երկրաւորս միայն կապեալ և զուարճանայք,
Անհոգ բնաւին ի յերկնայնոյն, անցաւորին հետամտեալ,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, առքերելով մեզ կենաց յոյս
Ոչ անցաւոր և աղցաւոր, այլ երկնային և անապակ։

—

Մխիթարիչ սգաւորաց՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Ցոյս, լոյս և կեանք բանտարկելոց՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Հայր հանգուցիչ տառապելոց, Քրիստոս յարեաւ ի մեռելոց։
Բժիշկ մեղօք ախտացելոց՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Ընդոստուցիչ թմրեցելոց՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։
Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Ց. Վ. Մ.